ՄԱՍ III-Ա

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետև սույն մասում՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 910.0 մլրդ դրամի չափով կամ 2011 թվականի համար հաստատված[1] 852.4 մլրդ դրամ, 2010 թվականին փաստացի[2] ստացված 759.7 մլրդ դրամ համադրելի գումարների համեմատությամբ համապատասխանաբար 6.8%-ով և 19.8%-ով ավելի:

2012 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 96.1% (այդ թվում՝ հարկերը և պետական տուրքերը կազմում են 80.5%), պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար 1.6%-ը և 2.3%-ը:

Ակնկալվում է, որ 2012 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 21.57%՝ 2011 թվականի ծրագրային 22.65%-ի, սպասողական 22.07%-ի և 2010 թվականի փաստացի 21.7%-ի դիմաց: ՀՀ 2010-2012թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը բերված է սույն բացատրագրի N 1 աղյուսակում:

ՀՀ 2012-2014թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (այսուհետև սույն մասում՝ ՄԺԾԾ) 2012 թվականի համար պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 892.9 մլրդ դրամի չափով: Նախագծով ծրագրված բյուջետային մուտքերը ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների համեմատ կրել են հետևյալ փոփոխությունները.

Աղյուսակ 3.1 ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտների՝ ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող գումարները (մլրդ դրամ)

---

[1] Այստեղ և այսուհետև սույն մասում որպես 2011 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները:

[2] 2010-2012թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2010 թվականին փաստացի ստացված 20.7 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝

- «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2010 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 1.4 մլրդ դրամը (ԱԱՀ-ի գծով՝ 1.0 մլրդ դրամ, պետական տուրքի գծով՝ 0.4 մլրդ դրամ):
- ՀՀ պետական կառավարման մարմինների 2010 թվականի արտաբյուջետային միջոցների փաստացի մուտքերը (որոնց գծով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել, սակայն «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն փաստացի ցուցանիշները արտացոլվել են ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում), ընդամենը 19.3 մլրդ դրամ:

Եկամտատեսակը	ՄԺԾԾ-ով հաստատված	Նախագծով առաջարկվող	Տարբերություն (Նախագիծ-ՄԺԾԾ)
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	892.90	910.03	17.13
1. Հարկային եկամուտներ, պետական տուրք և պարտադիր սոցիալական ապահովության վճարներ,այդ թվում՝	858.37	874.31	15.94
1.1. Հարկային եկամուտներ և պետական տուրք	716.31	732.25	15.94
1.2. Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	142.06	142.06	0.00
2. Պաշտոնական դրամաշնորհներ	13.54	14.83	1.29
3. Այլ եկամուտներ	20.99	20.89	-0.10

2012 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող եկամուտների տարբերությունների հիմնավորումները ներկայացված են ստորև՝ եկամուտների կանխատեսումներին վերաբերվող սույն բացատրագրի առանձին բաժիններում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները 2012 թվականի համար ծրագրվել են 874.3 մլրդ դրամի չափով կամ 2011 թվականի համար հաստատված և 2010 թվականի փաստացի[3] համադրելի մուտքերից համապատասխանաբար 100.9 մլրդ դրամով և 177.9 մլրդ դրամով ավելի:

Հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների 2012 թվականի ծրագրային մակարդակը կազմում է ՀՆԱ-ի 20.7%-ը՝ 2011 թվականի համար սպասողական[4] և 2010 թվականի փաստացի համապատասխանաբար 19.98%-ի և 19.89%-ի դիմաց:

ՄԺԾԾ-ով նախատեսվածի նկատմամբ 2012 թվականի հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերը Նախագծում ծրագրված են 15.9 մլրդ դրամով ավելի: Այս տարբերությունը պայմանավորված է քննարկվող խումբ եկամուտների գծով 2012 թվականի մուտքերի

[3] Առանց ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 2-րդ տողատակում նշված այն եկամուտների փաստացի գումարների, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում:

[4] Հաշվարկված է որպես «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշի հարաբերություն 2011 թվականի ՀՆԱ-ի կանխատեսվող մեծությանը:

ծրագրային մակարդակի ապահովմանն ուղղված՝ գալիք տարում օրենսդրական փոփոխություններ նախատեսող ՀՀ օրենքների նախագծերի շրջանառության մեջ գտնվող փաթեթով:

1.1 ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

2012 թվականի համար ծրագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի 732.3 մլրդ դրամ մակարդակը գերազանցում է 2010 թվականի համադրելի փաստացի մակարդակը 141.1 մլրդ դրամով, իսկ 2011 թվականի ծրագրային մակարդակը՝ 82.3 մլրդ դրամով: ՀՆԱ-ի նկատմամբ 2012 թվականի համար ծրագրված հարկային եկամուտների և պետական տուրքերի գումարի հարաբերությունը կկազմի 17.36%, 2011 թվականի սպասողական[4] 16.79% -ի և 2010 թվականի փաստացի 16.88%-ի դիմաց:

Համապատասխան փաստացի և ծրագրային համադրելի ցուցանիշների հաշվարկով ՀՍԳ-ն[5] 2012 թվականի համար կկազմի 1.41: Սա նշանակում է, որ 2012 թվականին հարկերի և պետական տուրքերի աճի տեմպը (12.7%) կգերազանցի անվանական ՀՆԱ-ի աճի տեմպին (9.0%)՝ առաջադրելով հարկահավաքման մակարդակն ապահովող լրացուցիչ միջոցառումների իրականացման խնդիր, որի լուծմանն ուղղված աշխատանքների շրջանակում մշակվել և շրջանառության մեջ է դրվել գալիք տարում օրենսդրական փոփոխություններ նախատեսող ՀՀ օրենքների նախագծերի վերը նշված փաթեթը:

2012 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես, հիմք են ընդունվել ստորև բերված աղյուսակում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները.

Աղյուսակ 3.2 2010-2012թթ փաստացի/կանխատեսումային առանձին մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշներ	2010	2011	2012
	փաստացի	կանխատեսում	
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,501.6	3,870.8	4,218.6
ՀՆԱ-ի իրական աճ	102.1	104.6	104.2
ՀՆԱ-ի դեֆլյատոր	109.2	105.7	104.6
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	-3,208.2	-3,528.8	-3,712.3

[5] ՀՆԱ-ի 1 տոկոս աճին համապատասխանող հարկերի տոկոսային աճը:

Ինչպես և նախորդ տարիներին, 2012 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով տարեկան ցուցանիշը ծրագրվել է ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, օրենսդրական փոփոխությունների և վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2012 թվականի համար ծրագրվել են 692.6 մլրդ դրամի չափով:

Օրենսդրական փոփոխությունների և վարչարարական միջոցառումների իրականացումից 2012 թվականին ակնկալվում է հավաքագրել 39.7 մլրդ դրամ:

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված՝ 2012 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 692.6 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականներին, որոնք կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի փաստացի և տարեկան սպասողական, 2002-2010թթ տարեկան փաստացի մուտքերի, և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2012 թվականի հարկային եկամուտները կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդներով (հաշվարկները կատարված են այլ հավասար պայմաններում):

1.1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետև՝ ԱԱՀ) գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 343.2 մլրդ դրամի չափով, որը 53.6 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի համադրելի փաստացի մակարդակը:

Ավելացված արժեքի հարկի գծով 2012 թվականի կանխատեսումային մուտքերը ներառում են ընդհանուր կարգով վճարվող գումարները, ինչպես նաև ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների կազմում ընդգրկված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները (հաստատագրված վճարի համապատասխանաբար 20% և 15%), որոնք գնահատվել են 5.0 մլրդ դրամի չափով: Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Ընդհանուր կարգով վճարվելիք ԱԱՀ-ն գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների

շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան[6]: Դրա համար վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, ֆինանսական գործունեություն, շինարարություն, առևտուր, տրանսպորտ, պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում, տնային տնտեսությունների վարման ծառայություններ) ստեղծված ավելացված արժեքն ամբողջությամբ կամ ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են նաև մակրոկանխատեսումների համաձայն 2012 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով: Հաջորդ նվազեցումը կատարվել է ծխախոտի[7], դիզելային վառելիքի և բենզինի[8] սպառման հաշվարկային գումարների չափով: Բացի նշված նվազեցումներից, ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

2012 թվականին սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն (առանց բենզինի ներմուծման ԱԱՀ-ի) հաշվարկվել է՝ այդ տարվա գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով 2011 թվականի փաստացի դրույքաչափը[9]:

Հաշվի առնելով 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը, համաձայն որի բենզինի ներմուծման համար հարկերը վճարվում են ընդհանուր կարգով, նախկին հաստատագրված վճարի փոխարեն, առանձին գնահատվել է բենզինի ներմուծումից 2012 թվականին ակնկալվող ԱԱՀ-ն: Հաշվարկներում հիմք է ընդունվել 2012 թվականին բենզինի ներմուծման ֆիզիկական ծավալների կանխատեսումը, 1 տոննայի համար վճարման ենթակա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի նվազագույն հանրագումարի՝ 112.0 հազար դրամի[10] կազմում ԱԱՀ-ի տոկոսային չափը՝ գնահատված 2011 թվականի ապրիլ-օգոստոս ամիսների փաստացի մուտքերի վերաբերյալ գանձապետական տվյալներով:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2012 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարին ավելացնելով ծխախոտի համար գանձվող հաստատագրված վճարների կազմում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, ստացվում են 2012 թվականի ծրագրային մուտքերը ԱԱՀ-ից:

---

[6] Այսուհետև՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է տվյալ տարվա ՀՆԱ-ի՝ տվյալ հարկատեսակի համար գնահատված հարկունակ մասը:

[7] ՀՀ ներմուծվող ծխախոտի և ՀՀ-ում արտադրված ծխախոտի արտադրանքի համար սահմանված է հաստատագրված վճար:

[8] 2011 թվականի հունվարի 1-ից դիզվառելիքի ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից, իսկ բենզինի ներմուծման համար հարկերը վճարվում են ընդհանուր կարգով և այս դեպքում հաշվարկները կատարված են առանձին:

[9] Այստեղ և այսուհետև՝ տվյալ հարկատեսակի գծով փաստացի կամ սպասողական (հաշվարկային) մուտքերի հարաբերությունը փաստացի կամ կանխատեսումային բազային:

[10] «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն «Բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 112000 ՀՀ դրամի:»:

1.1.2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 43.6 մլրդ դրամի չափով, որը 9.7 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը:

2012 թվականի կանխատեսվող գումարի գերակշիռ մասը՝ 74.6%-ը կամ 32.5 մլրդ դրամը կազմում են ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարներում ներառված ակցիզային հարկի հաշվարկային գումարները (հաստատագրված վճարի համապատասխանաբար 80% և 76.5%): Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ ընդհանուր կարգով և հաստատագրված վճարների տեսքով վճարվող գումարների:

Ընդհանուր կարգով 2012 թվականին վճարվելիք ակցիզային հարկի գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից՝ հաշվի առնելով այդ տարվա համար կանխատեսվող սպառման իրական և ապրանքների ներմուծման աճի տեմպերը (2.6% և 4.7%) և ընթացիկ տարվա համապատասխան սպասողական մուտքերը:

Դիզելային վառելիքի և բենզինի ներմուծումից 2012 թվականին գանձվելիք ակցիզային հարկի գումարները գնահատվել են առանձին: Բենզինի դեպքում, հաշվի առնելով բենզինի ներմուծմանն առնչվող 2011 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ վերը նշված օրենսդրական փոփոխությունը, 2012 թվականի ակցիզային հարկը գնահատվել է ԱԱՀ-ի դեպքում կիրառված մոտեցմամբ: Դիզելային վառելիքի ներմուծումից ակցիզային հարկը կանխատեսվել է ներմուծման ֆիզիկական ծավալների գնահատականի և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով 1 տոննայի համար սահմանված նվազագույն դրույքաչափի՝ 32.5 հազար դրամի հիման վրա:

1.1.3. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Շահութահարկի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 107.2 մլրդ դրամի չափով, որը 29.4 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը:

Շահութահարկի գծով բյուջետային եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, առևտուր՝ գյուղատնտեսական շուկաների մասով, տրանսպորտ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է հարկվում

շահութահարկով, տնտեսության զուտ շահույթը վիճակագրական տվյալների հիման վրա ճշգրտվել (նվազեցվել) է նշված ճյուղերի՝ շահութահարկով չհարկվող զուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Շահութահարկի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են վերը նշված մեթոդով 2011 թվականի համար կանխատեսված հարկման բազայի և փաստացի դրույքաչափի հիման վրա:

1.1.4. ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

Եկամտահարկի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 91.2 մլրդ դրամի չափով, որը 17.2 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը:

Հաշվարկները կատարված են ըստ եկամտի ստացման հիմնական աղբյուրների:

Աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի կանխատեսումներում առանձին վիճակագրական տվյալների և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա գնահատվել է հարկման փաստացի բազան: Դրա համար դիտարկվել է ՀՆԱ-ի կառուցվածքը, մասնավորապես՝ ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» հոդվածը: Հետագա հաշվարկներում այս ցուցանիշը նվազեցվել է գյուղատնտեսության ճյուղից ստացվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների, ոչ գյուղատնտեսական ոլորտում վարձու աշխատողների կանխատեսվող թվաքանակին համապատասխան չհարկվող նվազագույն աշխատավարձի և վերջիններիս կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների (աշխատավարձի 3%-ը) հանրագումարի չափով:

Ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներից գանձվող (ձեռնարկատիրական գործունեություն, ավանդներ և այլն) եկամտահարկի հաշվարկները կատարված են փաստացի դրույքաչափի մեթոդի կիրառմամբ և հիմնված են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշների վրա:

Եկամտի նշված երկու աղբյուրներից եկամտահարկի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 2012 թվականի հարկման բազայի և 2011 թվականի փաստացի դրույքաչափի համապատասխան կանխատեսումային մեծությունների հիման վրա:

1.1.5. ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2012 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 39.3 մլրդ դրամի չափով, որը 9.9 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը:

2012 թվականի մաքսատուրքի կանխատեսվող գումարը ներառում է ՀՀ ներմուծվող ծխախոտի համար հաստատագրված վճարում ներառված մաքսատուրքի հաշվարկային գումարը 1.6 մլրդ դրամի չափով (հաստատագրված վճարի 8.5%-ը): Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Այս հարկատեսակի դեպքում ևս հաշվարկները կատարվել են ընդհանուր կարգով և հաստատագրված վճարների տեսքով վճարվող գումարների համար առանձին: Ընդհանուր կարգով վճարվելիք գումարները կանխատեսվել են մաքսատուրքի փաստացի բազայի գնահատականի հիման վրա, որը հաշվարկվել է որպես ընդհանուր ներմուծման և մաքսատուրքով չհարկվող ապրանքների ներմուծման կանխատեսված ծավալների տարբերություն:

1.1.6. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ՝ ծխախոտի արտադրանքի համար

Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարի գծով 2012 թվականի համար ծրագրվել է 29.3 մլրդ դրամի չափով մուտքեր, որը 1.0 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը:

2012 թվականին ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի միջին ամսական ծավալները՝ նախորդ տարիների փաստացի և ընթացիկ տարվա սպասողական տվյալների հիման վրա: Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների հաշվարկային գումարները ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

1.1.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2012 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 22.5 մլրդ դրամի չափով, որը 0.5 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը: Այս դեպքում կանխատեսումներում հաշվի չի առնվել 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող (ընդունվել է 2011 թվականին) օրենսդրական փոփոխությունը, որի արդյունքում հաստատագրված վճարով հարկվող գործունեության առանձին տեսակներ 2012 թվականից կհարկվեն ընդհանուր կարգով:

2010 թվականի նկատմամբ 2012 թվականին ակնկալվող մուտքերի աճի ցածր տեմպը 2010 թվականի փաստացիի նկատմամբ (2.2%) պայմանավորված է մեկ այլ օրենսդրական փոփոխությամբ, ըստ որի 2011 թվականի հունվարի 1-ից ներմուծողների կողմից բենզինի, դիզելային վառելիքի իրացման համար վճարվող հաստատագրված վճար սահմանող օրենքը ուժը կորցրած է ճանաչվել: Նկատենք, որ այս խումբ հաստատագրված վճարներից 2010 թվականին հավաքագրվել է 1.3 մլրդ դրամ:

2012 թվականի մուտքերը հաշվարկվել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2012 թվականին առևտրի (4.0%), հյուրանոցային և ռեստորանային (3.0%) և ընդհանուր ծառայությունների (3.5%) ոլորտներում ակնկալվող տնտեսական աճի, ինչպես նաև համապատասխան վճարների գծով մուտքերի՝ 2011 թվականի հարկային սահմանության գործակիցները[11]:

1.1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 14.1 մլրդ դրամի չափով, որը 5.0 մլրդ դրամով գերազանցում է 2010 թվականի փաստացի մակարդակը:

2012 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով 2005-2011թթ փաստացի/սպասողական մուտքերը, արդյունաբերության ճյուղի 2012 թվականին ակնկալվող տնտեսական աճի՝ 7.5%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 5.2%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

1.1.9. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ[12]

Այլ հարկային եկամուտների գծով 2012 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 2010 թվականի մակարդակի չափով՝ շուրջ 10.5 մլրդ դրամ:

---

[11] Տնտեսության տվյալ ճյուղի 1 տոկոս աճին համապատասխանող հարկի տոկոսային աճը:

[12] Ներառում է ճանապարհային վճարները, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարները, մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները, ուսումնասիրության կամ արդյունահանման լիցենզառուի, ինչպես նաև ուսումնասիրության և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի կողմից վճարվող կոնցեսիոն վճարը, պետական բյուջե վճարման ենթակա հողի հարկն ու գույքահարկը, արտոնագրային վճարները, պետական բյուջե մուտքագրվող այլ հարկային եկամուտները:

1.1.10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 21,148.3 մլն դրամի չափով՝ 2011 թվականի համար հաստատված[13] 20,745.8 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված[14] 19,623.2 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ 2000-2011 թվականների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2012 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը գնահատվել են 2011 թվականի սպասողական մակարդակին հավասար՝ 689.5 մլն դրամ, որը համապատասխանաբար 128.7 մլն դրամով և 11.5 մլն դրամով պակաս է 2011 թվականի համար հաստատված և 2010 թվականի փաստացի մակարդակներից:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 24.3 մլն դրամի չափով, 2011 թվականի համար հաստատված 16.3 մլն դրամի, սպասողական 28.3 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 19.7 մլն դրամի դիմաց:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,026.5 մլն դրամի չափով՝ 2011 թվականի համար հաստատված 1,992.2 մլն դրամի, սպասողական 1,926.3 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 1,830.9 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2008-2010թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումներից, 2011 թվականի սպասողական մուտքերից: Այս դեպքում հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ

---

[13] Այս բաժնում որպես ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի պետական տուրքի համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի պետական տուրքի գծով հաստատված ցուցանիշները:

[14] Առանց ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 2-րդ տողատակում նշված 0.4 մլրդ դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

օրենքի 36-րդ հոդվածը[15], հավաքագրման միտումներից բացի հաշվի է առնվել նաև այդ տարիներին ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,557.8 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 381.8 մլն դրամով, 245.0 մլն դրամով և 597.1 մլն դրամով ավելի է 2011 թվականի համար հաստատված, սպասողական և 2010 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 98.1%-ը կամ 3,489.0 մլն դրամը 2012 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին՝

•ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են 946.7 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2012 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 26.6 %-ը), որը 2011 թվականի հաստատված, սպասողական և 2010 թվականի փաստացի ցուցանիշներից ավելի է համապատասխանաբար 285.0 մլն, 12.8 մլն և 206.0 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2002-2010թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումների հիման վրա գնահատված 2011 թվականի սպասողական մուտքերից, 2012 թվականին լրացուցիչ մոտ 1000 մեքենաների պետական համարանիշ տալու ենթադրության հիման վրա:

•գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,023.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2012 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 28.8 %-ը), 2011 թվականի համար հաստատված 1,206.2 մլն դրամի, սպասողական 927.3 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 873.8 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2009-2010թթ հավաքագրման միտումներից և 2011 թվականի սպասողական մուտքերից:

•լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են 877.5 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2012 թվականի պետական տուրքերի կանխատեսվող

[15] ՀՀ տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքերը արտարժույթով գանձելիս հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված նախորդ տարվա՝ արժութային շուկաներում ձևավորված միջին տարեկան փոխարժեքը:

մուտքերի ամբողջ ծավալի 24.7 %-ը), 2011 թվականի հաստատված, սպասողական 760.8 մլն-ական դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 761.4 մլն դրամի դիմաց:

Հաշվարկները կատարված են ըստ 2012 թվականին պարտադիր տեխնիկական զննություն անցնելիք մեքենաների թվաքանակի կանխատեսումների (18 հազար ընդհանուր օգտագործման և 315 հազար ոչ ընդհանուր օգտագործման մեքենաներ):

- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են 476.1 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2012 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 13.4 %-ը), 2011 թվականի հաստատված 330.6 մլն դրամի, սպասողական 463.3 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 364.7 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2000-2010թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումների հիման վրա գնահատված 2011 թվականի սպասողական մուտքերից և 2012 թվականին լրացուցիչ մոտ 1000 մեքենաների տեխնիկական անձնագիր տալու ենթադրության հիման վրա:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են 0.95 մլն դրամի չափով՝ 2011 թվականի համար հաստատված 1,0 մլն դրամի, սպասողական 0.99 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 1.07 մլն դրամի դիմաց:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 2011 թվականի սպասողական մակարդակի՝ 311.0 մլն դրամի չափով, որը 2011 թվականի համար հաստատված և 2010 թվականի փաստացի ցուցանիշները գերազանցում է 88.0 մլն դրամով և 19.4 մլն դրամով:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,457.8 մլն դրամի չափով՝ 2011 թվականի համար հաստատված 2,294.4 մլն դրամի, սպասողական 2,302.2 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 2,122.1 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2007-2010թթ հավաքագրման միտումներից և 2011 թվականի սպասողական մուտքերից:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 4,364.3 մլն դրամի

չափով, որը 2011 թվականի համար հաստատված, սպասողական և 2010 թվականին փաստացի ստացված մուտքերը գերազանցում է համապատասխանաբար 394.8 մլն դրամով, 90.5 մլն դրամով և 205.1 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբից 2012 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 3,559.7 մլն դրամը կամ 81.6 %-ը, նախատեսվում է ապահովել շահումով խաղերի և վիճակախաղերի, բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, տրանսպորտի, էներգետիկայի, քաղաքաշինության բնագավառներում և սննդամթերքի արտադրության համար տնտեսվարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի գումարների հաշվին: Կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված անհրաժեշտ քանակական տվյալներից, 2010 թվականի փաստացի և 2011 թվականի սպասողական մուտքերից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 7,711.3 մլն դրամի չափով, որը 2011 թվականի համար հաստատված ցուցանիշից պակաս է 539.0 մլն դրամով, իսկ 2011 թվականի սպասողական և 2010 թվականի փաստացի ստացված ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 158.0 մլն դրամով և 178.5 մլն դրամով:

Նշված պետական տուրքերից 2012 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 7,084.4 մլն դրամը (91.9%), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 2 տեսակների հաշվին՝

• ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրք, որի գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 5,943.0 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 77.1 %-ը), որը 2011 թվականի համար հաստատված և 2010 թվականի փաստացի ստացված ցուցանիշից պակաս է 907.0 մլն դրամով և 285.2 մլն դրամով, իսկ 2011 թվականի սպասողական ցուցանիշից ավելի է 103.0 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով 2004-2009 թվականների փաստացի հավաքագրման միտումներից (կիրառվել է 2011թ սպասողականի գնահատականներում), հաշվի առնելով «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված Մաստեր Պլանում նախատեսված ուղևորափոխադրումների տարեկան 1.5% աճը:

• վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների և օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2012 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,141.4 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար

գանձվող պետական տուրքերի գծով 2012 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 14.8 %-ը) չափով՝ 2011 թվականի համար հաստատված, սպասողական և 2010 թվականին փաստացի ստացված 799.5 մլն դրամի, 1,113.1 մլն դրամի և 701.1 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով 2009-2010թթ փաստացի հավաքագրման միտումներից և 2011 թվականի սպասողական մուտքերից:

2. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Նախագծով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մուտքերը նախատեսվել են 142.1 մլրդ դրամի չափով, 2011 թվականի համար հաստատված 123.4 մլրդ դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 105.3 մլրդ դրամի դիմաց:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012 թվականի համար ծրագրված, 2011 թվականի համար սպասողական[16] և 2010 թվականի փաստացի մուտքերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերության ցուցանիշները կկազմեն համապատասխանաբար՝ 3.37%, 3.19% և 3.01%:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2012 թվականի մուտքերի ծրագրային մակարդակի ապահովման նպատակով ՀՀ օրենքների նախագծեր ներառված են վերը նշված՝ գալիք տարում օրենսդրական փոփոխություններ նախատեսող շրջանառության մեջ գտնվող ՀՀ օրենքների նախագծերի փաթեթում:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2012 թվականին ակնկալվում է ստանալ 14.8 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, ՄԺԾԾ-ով նախատեսված 13.5 մլրդ դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված և Նախագծով առաջարկվող գումարների միջև 1.3 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքների փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 369.93 և 524.01 դրամ, Նախագծում՝ 367.5 և 525.45 դրամ) և նպատակային պաշտոնական դրամաշնորհների[17] ծավալի ճշգրտմամբ: Յուրաքանչյուր դեպքում պաշտոնական

---

[16] Հաշվարկված է որպես «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշի հարաբերություն 2011 թվականի ՀՆԱ-ի կանխատեսվող մեծությանը:

[17] Որաշակի ծախսային ծրագրերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ:

դրամաշնորհների նախատեսվող գումարները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա համաձայնագրերի կամ դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունների հիման վրա:

Մասնավորապես, 2012 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

1. Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ - ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրերից՝ 18.0 մլն եվրո կամ 9.46 մլրդ դրամ,
2. Նպատակային պաշտոնական դրամաշնորհներից՝ 14.6 ԱՄՆ դոլար կամ 5.37 մլրդ դրամ, որից՝

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 3.89 մլն ԱՄՆ դոլար կամ 1.43 մլրդ դրամ,
- ԳՂՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 4.68 մլն ԱՄՆ դոլար կամ 1.72 մլրդ դրամ,
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 2.80 մլն ԱՄՆ դոլար կամ 1.03 մլրդ դրամ,
- Եվրոմիության աջակցությամբ իրականացվող Հայաստանի փոքր համայնքների ջրային դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 2.03 մլն ԱՄՆ դոլար կամ 0.75 մլրդ դրամ,
- Այլ դոնորների աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ 1.22 մլն ԱՄՆ դոլար կամ 0.45 մլրդ դրամ:

Նպատակային պաշտոնական դրամաշնորհների գծով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N 15 աղյուսակում:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2012 թվականի համար ծրագրվել են 20.9 մլրդ դրամի չափով՝ 2011 թվականի համար հաստատված[18] 23.0 մլրդ դրամի և սպասողական 24.7 մլրդ դրամի, 2010 թվականին փաստացի ստացված 35.0 մլրդ դրամի դիմաց: ՄԺԾԾ-ով այլ եկամուտների գծով 2012 թվականի համար նախատեսվել է 21.0 մլրդ դրամ:

Այլ եկամուտների գծով 2012 թվականի համար ծրագրված տարեկան մուտքերը 2011 թվականի համար հաստատված ծրագրից պակաս են 2.1 մլրդ դրամով, 2011 թվականի սպասողականից՝ 3.8 մլրդ դրամով, 2010 թվականի փաստացի ցուցանիշից՝ 14.1 մլրդ դրամով, իսկ ՄԺԾԾ-ով հաստատված գումարից՝ 0.1 մլրդ դրամով:

---

[18] Այս բաժնում որպես ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների գծով հաստատված ցուցանիշները:

2012 թվականի ծրագրային ցուցանիշի նվազումը 2011 թվականի համար հաստատված և սպասողական, ՄԺԾԾ-ով հաստատված և 2010 թվականին փաստացի համապատասխան ցուցանիշների նկատմամբ հիմնականում պայմանավորված է երկու եկամտատեսակով, որոնց համապատասխան ցուցանիշները ներկայացվում են ստորև բերված աղյուսակ 3.3-ում.

Աղյուսակ 3.3. Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով ՀՀ 2010-2012թթ փաստացի/ծրագրային ցուցանիշները (մլրդ դրամներով)

Ցուցանիշը	2010	2011		2012	
	փաստ	ծրագիր	սպասողական	ՄԺԾԾ	նախագիծ
1. Ընդամենը այլ եկամուտներ	35.0	23.0	24.7	21.0	20.9
2. Տարբերությունը 2012թ նախագծի նկատմամբ	*14.1*	*2.1*	*3.8*	*0.1*	*x*
3. Ընդամենը ստորև	15.5	4.8	5.6	2.3	0.9
3.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներ	14.4	3.9	5.0	1.6	0.9
3.2 Նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեներից ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների (բացառությամբ փոխառու միջոցների) վերադարձից մուտքեր	1.1	0.9	0.6	0.7	0.0
4. Տարբերությունը 2012թ նախագծի նկատմամբ (ըստ տող 3-ի)	*14.6*	*3.9*	*4.7*	*1.4*	*x*

Վերը նշված երկու եկամտատեսակներից առաջինի ձևավորման հիմքում ընկած են ՀՀ կենտրոնական բանկում ավանդադրվող՝ տվյալ տարվա բյուջեի կատարման ընթացքում ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցների ծավալները, որոնց փոփոխությամբ էլ հիմնականում պայմանավորված է նշված տարիների փաստացի և ծրագրային ցուցանիշների տարբերությունը: 2012 թվականի ծրագրային գումարների կազմում նախորդ տարիների ՀՀ պետական բյուջեներից ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացված գումարների (բացառությամբ փոխառու միջոցների) վերադարձից մուտքերի բացակայությունը պայմանավորված է նրանով, որ նշված մուտքերը վերադասակարգվել են որպես պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուր, ինչի արդյունքում ՀՀ 2012թ պետական բյուջեի նախագծում այլ եկամուտների կազմից հանվել է այդ եկամտատեսակի գծով ակնկալվող 650 մլն դրամի չափով գումարը:

Բացի նշվածից, այլ եկամուտների գծով 2012 թվականի ծրագրային ցուցանիշները 2010 թվականի փաստացի, 2011 թվականի հաստատված և սպասողական, ինչպես նաև 2012 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների հետ համեմատելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին եկամտատեսակներ ձևավորվում են արտարժութային հիմքով, որի արդյունքում արտարժույթի փոխանակային արժեքների փոփոխությունները ևս ազդում են ստացվող համապատասխան գումարների վրա:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2012 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի մուտքերը: Ստորև ներկայացվում են 2012 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2011 թվականի հաստատված և սպասողական, 2010 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2012 թվականի համար կանխատեսվում են շուրջ 735.6 մլն դրամ, 2011 թվականի համար հաստատված 741.1 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 754.7 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2011, 2012 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների և վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2012 թվականին ակնկալվում են 1,385.0 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 885.0 մլն դրամ՝ 2011 թվականի համար հաստատված 3,910.0 մլն դրամի, սպասողական 5,018.0 մլն դրամի և 2010 թվականի փաստացի ստացված 14,419.9 մլն դրամի դիմաց: 2012 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների: 2012 թվականին տոկոսավճարների նվազումը պայմանավորված է ավանդադրվող գումարների ծավալների կրճատմամբ:

2.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2012 թվականին ակնկալվում են 500.0 մլն դրամի չափով մուտքեր՝ 2011 թվականի համար ծրագրված 340.0 մլն դրամի, սպասողական 480.0 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 421.9 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2012 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների

հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2012 թվականին կանխատեսվում են 5,137.1 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2012 թվականին ակնկալվում է ստանալ 4,958.6 մլն դրամ, որը ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Ծրագրային մուտքերի բաշխվածքն ըստ խոշոր վարկային ծրագրերի հետևյալն է.

ա) ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կենտրոնական բանկի միջև 2009 թվականի հուլիսի 8-ին կնքված ֆինանսական գործակալության պայմանագրի համաձայն տնտեսվարող սուբյեկտներին վարկ տրամադրելու նպատակով ՌԴ վարկի հաշվին ՀՀ կենտրոնական բանկին հատկացված միջոցների օգտագործման դիմաց վարկառուների կողմից ՀՀ 2012 թվականի պետական բյուջե կվճարվի շուրջ 3,252.3 մլն դրամ տոկոսավճար:

բ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքված ենթավարկային պայմանագրերի համաձայն (2004 թվականի փետրվարի 16-ին կնքված N 4(48)/CP-2004, 2005 թվականի փետրվարի 7-ին կնքված N 4(BEC)-2005, 1999 թվականի նոյեմբերի 30-ին և 1999 թվականի հունիսի 25-ին կնքված պայմանագրեր) «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրված վարկի դիմաց ՀՀ 2012 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 169.9 հազ. ԱՄՆ դոլար և 291.5 հազ. Եվրո կամ շուրջ 215.6 մլն դրամ (1 Եվրոն=525.45 ՀՀ դրամ, 1 ԱՄՆ դոլար=367.5 ՀՀ դրամ) տոկոսավճար:

գ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի միջև 2005 թվականի մայիսի 12-ին կնքված օժանդակ վարկի համաձայնագրի և 2007 թվականի մայիսի 4-ին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին տրամադրված վարկի օգտագործման դիմաց ՀՀ 2012 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 29.0 հազ. ԱՄՆ դոլար և 24,204.0 հազ. ճապոնական իեն կամ շուրջ 126.3 մլն դրամ (10 ճապոնական իեն=47.80 ՀՀ դրամ) տոկոսավճար:

դ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2004 թվականի հուլիսի 12-ին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրված վարկի դիմաց հաշվարկվել է 57.2 մլն ճապոնական իենի կամ շուրջ 273.2 մլն դրամի չափով տոկոսավճար:

ե) ՀՀ ֆինանսների նախարարության և «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպության միջև կնքված վարկային համաձայնագրի շրջանակներում «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպությանը ՌԴ վարկի հաշվին տրամադրված վարկի դիմաց հաշվարկվել է շուրջ 120.5 մլն դրամի չափով տոկոսավճար:

զ) ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 717-Ա որոշմամբ հաստատված տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում ՌԴ վարկի հաշվին տրամադրված այլ վարկերի օգտագործման դիմաց հաշվարկվել է շուրջ 619.7 մլն դրամի չափով տոկոսավճար:

3.2 Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2012 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 485.8 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 178.5 մլն դրամ:

4. Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 51.0 մլն դրամի չափով՝ 2011 թվականի համար հաստատված 62.4 մլն դրամի, սպասողական 58.0 մլն դրամի և 2010 թվականի փաստացի ստացված 215.1 մլն դրամի դիմաց:

5. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2012 թվականի մուտքերը ծրագրվել են 3,037.9 մլն դրամի չափով՝ 2011 թվականի համար ծրագրված 2,514.2 մլն դրամի, սպասողական 2,844.8 մլն դրամի և 2010 թվականին փաստացի ստացված 2,472.8 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով տվյալ մարմնի կողմից կիրառվող պատժամիջոցների գծով 2004-2010 թվականների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2012 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 10,451.6 մլն դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2012 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 4,093.7 մլն դրամի չափով և ռադիոհաճախականության օգտագործման վճարները՝ 5,200.0 մլն դրամի չափով: Վերջինս ծրագրվել է, հաշվի առնելով Նախագծի 7-րդ հավելվածում ներկայացված ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափերը 2012 թվականի համար: Հաջորդ խոշոր բաղադրիչներն են «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման

դիմաց վճարը և հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը, որոնք 2012 թվականի համար ծրագրվել են համապատասխանաբար 1 մլն ԱՄՆ դոլարի (կամ 367.5 մլն դրամի) և 218.9 մլն դրամի չափով:

ՄՈՒՏՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրվել են շուրջ 1.77 մլրդ դրամի չափով, որը 1.7 մլրդ դրամով և 1.2 մլրդ դրամով ավելի է համապատասխանաբար 2011 թվականի հաստատված և 2010 թվականին փաստացի ստացված մուտքերից:

2012 թվականի համար բյուջետային մուտքերի այս տեսակի գծով ծրագրված գումարից 1.73 մլրդ դրամը ծրագրվել է պետական սեփականություն համարվող հողերի, իսկ մնացածը՝ բյուջետային հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող պետական գույքի օտարումի, ինչպես նաև նախորդ տարիներին կնքված շենքերի և շինությունների առուվաճառքի պայմանագրերից բխող՝ տարաժամկետ վճարումների գծով: